**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը**

**Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ**

Սիրելի՛ հայրենակիցներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության, Շուշիի ազատագրման օրվա առթիվ:

Իմ ջերմ շնորհավորանքներն եմ հղում պատերազմի վետերաններին, մեր անձնուրաց երկրապահներին, բոլոր ազատամարտիկներին, յուրաքանչյուր սյունեցուն:

Այսօր խոնարհումով և հպարտությամբ ենք տոնում Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը:

Հաղթանակի խորհուրդը բազմապատկվում է մեկ այլ իրադարձությամբ՝ Շուշիի ազատագրմամբ, որը հայոց պատմության փառապանծ ու հերոսական էջերից է:

Մայիսյան հաղթանակները խորհրդանշում են մեր ազատատենչ ժողովրդի անկոտրում կամքն ու հաղթական ոգին, նրա անձնուրաց նվիրվածությունն ու հավատարմությունը հայրենիքին: Մենք միասնության ու համախմբվածության, ազգային ոգու և արժանապատվության նվիրական զգացումներով ենք տոնում այս օրը:

Սիրելի՛ վետերաններ ու ազատամարտիկներ, ձեր սխրանքի շնորհիվ ձեռք բերված փառապանծ հաղթանակները թող զորավիգ լինեն մեզ՝ մեր խաղաղ և հուսալի վաղվա օրը կերտելու գործում:

Կրկին շնորհավորելով այս փառավոր տոնի առիթով, մաղթում եմ ձեզ տոնական բարձր տրամադրություն, խաղաղ երկինք ու նոր նվաճումներ մեր անկախ պետականության ամրապնդման գործում:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան

8 մայիսի 2013թ.